ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
Թիվ ՀԿԴ/0052/02/22 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով
ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2025 թվականի որոշման պատճառաբանական մասի վերաբերյալ

«01» հուլիսի 2025թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2025 թվականի հուլիսի 01-ին գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ գլխավոր դատախազության (այսուհետ՝ Դատախազություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.03.2023 թվականի որոշման դեմ՝ ըստ Դատախազության հայցի ընդդեմ Հայկ Յուրիի Ճշմարիտյանի, Վաղարշակ Ռաֆիկի Ալեքսանյանի՝ համապարտության կարգով հօգուտ ՀՀ պետական բյուջեի 1.223.147,94 ԱՄՆ դոլարին համարժեք 479.669.696 ՀՀ դրամ՝ որպես պետությանը պատճառված վնասի հատուցում բռնագանձելու պահանջի մասին, որոշել է. «Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի թիվ ՀԿԴ/0052/02/22 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով 03.05.2024 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ նոր քննության»:

Վճռաբեկ դատարանի դատավոր Արման Կուրեխյանս, համաձայն չլինելով Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության՝ վերը նշված որոշման (այսուհետ՝ Որոշում) պատճառաբանական մասում արտահայտած դիրքորոշման հետ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-10-րդ մասերով, ստորև շարադրում եմ իմ հատուկ կարծիքը:

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

Դիմելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ Դատախազությունը պահանջել է Հայկ Յուրիի Ճշմարիտյանից, Վաղարշակ Ռաֆիկի Ալեքսանյանից համապարտության կարգով հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 1.223.147,94 ԱՄՆ դոլարին համարժեք 479.669.696 ՀՀ դրամ՝ որպես պետությանը պատճառված վնասի հատուցում: Քաղաքացիական գործին տրվել է թիվ ԵԴ/4630/02/22 համարը:

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 03.11.2022 թվականի որոշմամբ գործն ըստ ենթակայության հանձնվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին (այսուհետ՝ Դատարան): Դատարանում թիվ ԵԴ/4630/02/22 քաղաքացիական գործին տրվել է նոր՝ թիվ ՀԿԴ/0052/02/22 համարը:

28.03.2023 թվականին հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացրել պատասխանող Հայկ Յուրիի Ճշմարիտյանը (ներկայացուցիչ՝ Մ. Խաչիկյան): 07.09.2023 թվականին Դատարանը որոշում է կայացրել գործից մաս առանձնացնելու և առանձին վարույթում քննելու մասին:

Դատարանի 07.09.2023 թվականի վճռով Դատախազության հայցն ընդդեմ Հայկ Յուրիի Ճշմարիտյանի մերժվել է՝ հայցային վաղեմության ժամկետի լրանալու հիմքով:

11.10.2023 թվականին սույն գործով վերաքննիչ բողոք է ներկայացրել Դատախազությունը (ներկայացուցիչ՝ Ա. Մադոյան):

Վերաքննիչ դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Ոսկանյան, դատավորներ՝ Գ. Թորոսյան, Դ. Հովհաննիսյան) 03.05.2024 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 07.09.2023 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

04.06.2024 թվականին սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Դատախազությունը (ներկայացուցիչ՝ Գ. Ղուկասյան):

Վճռաբեկ դատարանի 21.06.2024 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է և սահմանվել է հնգօրյա ժամկետ՝ վճռաբեկ բողոքում առկա թերությունները շտկելու ու վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

02.07.2024 թվականին Դատախազությունը կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 17.07.2024 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ:

07.08.2024 թվականին վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հայկ Յուրիի Ճշմարիտյանը (ներկայացուցիչ՝ Մ. Խաչիկյան):

<u>Հատուկ կարծիքի հիմնավորումները.</u>

Հատուկ կարծիքը շարադրելիս հիմք են ընդունվել Որոշման մեջ ներկայացված՝ վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները, վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները, վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը:

Վճռաբեկ դատարանը 2025 թվականի հուլիսի 01-ին քննել է Դատախազության կողմից բերված վճռաբեկ բողոքը՝ առաջադրելով հետևյալ իրավական հարցադրումը. *Հայցային վաղեմության հատուկ ժամկետ նախատեսող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1[1]-ին մասն արդյո՞ք կիրառելի է պետություն և կոռուպցիոն գործողություն (անգործություն) իրականացրած անձ հարաբերությունների նկատմամբ պետության կողմից վնասի հատուցման պահանջով ներկայացված հայցերով:*

Հարցադրման համատեքստում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1[1]-ին մասի ընդունման նպատակին և, հղում անելով «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-3-րդ, 5-րդ, 7-րդ, 17-րդ հոդվածներին, արձանագրել է

հետևյալը. «Կոնվենցիան պայմանավորվող կողմերից պահանջում է ապահովել իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցներ այն անձանց համար, ովքեր տուժել են կոռուպցիոն գործողությունների հետևանքով: Այլ կերպ ասած՝ Կոնվենցիայի հասցեատերը պայմանավորվող կողմն է, իսկ դրանով սահմանված իրավունքների կրողներն այն անձինք են, ովքեր տուժել են կոռուպցիոն գործողությունների հետևանքով: Պայմանավորվող կողմի՝ պետության պոզիտիվ պարտականությունն է ձեռնարկել բոլոր այն արդյունավետ միջոցները, որ կոռուպցիոն գործողություններ տեղի չունենան, իսկ այն դեպքում, երբ տեղի է ունեցել նման գործողություն, ապա իր ներքին օրենսդրությամբ նախատեսել այնպիսի ընթացակարգեր, որի գործադրմամբ կվերականգնվի կոռուպցիոն գործողություններից տուժած անձանց իրավունքները: Այս տեսակետից պետությունը որպես քաղաքացիական շրջանառության հավասար մասնակից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդված) անմիջականորեն չի օգտվում Կոնվենցիայով սահմանված իրավունքներից՝ իր այդ իրավունքի հասցեատեր լինելու հանգամանքով պայմանավորված: Ասվածը չի նշանակում, որ պետությունը՝ որպես հանրային իշխանության կրող և հանրային շահի ներկայացնող չի կարող վնաս կրել կոռուպցիոն գործողությունների հետևանքով և հետամուտ լինել պատճառված վնասը վերականգնելու ուղղությամբ: Այս տեսակետից Կոնվենցիան չի խոչընդոտում, որ պետությունն իր ներպետական օրենսդրությամբ սահմանի կանոններ նմանատիպ դեպքերի համար: Այդուհանդերձ, Կոնվենցիան նախ և առաջ պաշտպանում է ոչ թե պետությանը, այլ այն անձանց (ֆիզիկական և/կամ իրավաբանական), ովքեր տուժել են կոռուպցիոն գործողությունների հետևանքով՝ փոխհատուցում պահանջելու հենց պետությունից (հոդված 5): Այս տեսակետից պետությունը չի կարող միաժամանակ հանդիսանալ և՛ իրավունքի կրող, և՛ իրավունքի հասցեատեր»:

Վճռաբեկ դատարանը եկել է հետևյալ եզրահանգմանը. «(...) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1^1-ին մասը կիրառելի է այն իրավահարաբերությունների նկատմամբ, որոնք առաջացել են կոռուպցիոն գործողությունների հետևանքով վնաս կրած անձանց փոխհատուցում պահանջելու իրավունքի իրացման ընթացքում, որտեղ պետությունը հանդես է գալիս որպես այդ իրավունքների իրացումն ապահովող կողմ: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1^1-ին մասը (որն ընդունվել է՝ հիմքում ունենալով Կոնվենցիան) չի կարող կիրառվել պետություն և կոռուպցիոն գործողության հետևանքով ենթադրյալ վնաս պատճառած անձ իրավահարաբերություններում: Միաժամանակ, պետությունն ունի պոզիտիվ պարտականություն ձեռնարկելու այնպիսի միջոցներ, որպեսզի կոռուպցիոն գործողություններ տեղի չունենան, իսկ եթե տեղի են ունեցել, ապա իր ներքին օրենսդրությամբ նախատեսի արդյունավետ կառուցակարգեր և ընթացակարգեր այդ գործողություններից տուժած անձանց իրավունքի վերականգնման համար: Ամեն դեպքում, Կոնվենցիայի տրամաբանությամբ

նմանատիպ պահանջները կարող են ներկայացվել ոչ ավելին քան տասը տարվա ընթացքում՝ կոռուպցիոն գործողության կատարման օրվանից սկսած»:

Վճռաբեկ դատարանն, իր իրավական դիրքորոշումը կիրառելով սույն գործի փաստերի նկատմամբ ու գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների իրավաչափությունը, գտել է. «(...) ստորադաս դատարանները եկել են սխալ եզրահանգման և հաշվի չեն առել, որ ինչպես Կոնվենցիայի 7-րդ հոդվածով, այնպես էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1^1-ին մասով նախատեսված հայցային վաղեմության ժամկետը գործում է այն իրավահարաբերությունների նկատմամբ, երբ կոռուպցիոն գործողության հետևանքով վնաս կրած անձը (զոհը) հայց է ներկայացնում ընդդեմ պետության կամ կոռուպցիոն գործողություն (անգործություն) իրականացրած անձի դեմ՝ հատուցում ստանալու պահանջով: Այս դեպքում նման պահանջների համար նախատեսված է տասը տարի այն կոռուպցիոն գործողության կատարման օրվանից սկսած, որն առաջացրել է վնաս: Այլ կերպ ասած՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1^1-ին մասը գործում է պետություն (պաշտոնատար անձ) և կոռուպցիոն գործողության հետևանքով վնաս կրած անձ (զոհ) իրավահարաբերություններում: Սույն գործի փաստերից հստակ է, որ տվյալ դեպքում խոսքը չի գնում զոհի կարգավիճակ ունեցող անձի վերաբերյալ, քանի որ մի կողմից որպես հայցվոր հանդես է գալիս պետությունը, որը հասցեատերն է Կոնվենցիայով տրամադրվող իրավունքների և երաշխիքների, իսկ մյուս կողմից հանդես է գալիս պատասխանողը, ով կոռուպցիոն գործողության հետևանքով ենթադրյալ վնաս պատճառած անձն է: Այսինքն՝ տվյալ իրավահարաբերություններում առկա չէ զոհի կարգավիճակ ունեցող անձը, ուստի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1^1-ին մասը ենթակա չէ կիրառման:

Նման իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի է հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման ընդհանուր կանոնը»:

Գտնում եմ, որ 333-րդ հոդվածի 1^1-ին մասի իրավական էությունը բացահայտելու համար, բացի ընդունման նպատակից, Վճռաբեկ դատարանը պետք է հաշվի առներ նաև դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսդրության սկզբունքները՝ հստակ սահմանելով նշված նորմի կիրառման նախապայմանները և քննության առարկա դարձնելով վճռաբեկ բողոքում բարձրացված՝ ժամանակի մեջ դրա գործողության հարցը:

20.05.2005 թվականի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-123-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 04.07.2005 թվականին) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածը լրացվել է 1^1-ին մասով՝ եթե անձի իրավունքի խախտումը նրա համար առաջացրել է վնաս, և խախտումը կապված է սույն օրենսգրքով սահմանված կարգով գործարքների կնքման կամ դրանց կատարման ընթացքում կոռուպցիոն գործողության հետ, ապա վնասի

հատուցման պահանջներով հայցային վաղեմության ժամկետը սահմանափակվում է 10 տարով՝ այն գործողության կատարման օրվանից հաշված, որն առաջացրել է վնաս, որում տեղ է գտել «կոռուպցիոն գործողություն» եզրույթը:

Թեև ՀՀ օրենսդրությամբ կոռուպցիայի համընդգրկուն և ամփոփիչ հասկացությունը ձևակերպված չէ, այնուամենայնիվ, ՀՀ կառավարության 06.11.2003 թվականի թիվ 1522-Ն որոշման մեջ տրվել է կոռուպցիայի հետևյալ նկարագրությունը. «Կոռուպցիան անձնական կամ այլ շահադիտական նպատակով, տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է: Կոռուպցիան որպես վստահված իշխանության չարաշահում, ունի մի շարք դրսևորումներ և բազում «նրբերանգներ», որոնցից են կաշառակերությունը՝ կաշառք ստանալը, տալը, կաշառքի միջնորդությունը, կաշառքի շորթումը, հովանավորչությունը, պաշտոնական դիրքի կամ կապերի չարաշահումը, պաշտոնական լիազորությունները չարաշահելը կամ անցնելը, պաշտոնական կեղծիքը, պաշտոնական դիրքի օգտագործմամբ պետական սեփականության յուրացումն ու վատնումը, ինչպես նաև պաշտոնեական այլ չարաշահումները»:

Վերոգրյալից կարելի է եզրահանգել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1[1]-ին մասի իմաստով կոռուպցիոն գործողություն ասելով պետք է հասկանալ քաղաքացիաիրավական գործարքների կնքման կամ կատարման ընթացքում այն գործողությունները, որոնք պաշտոնատար անձը կատարել է իր իշխանական լիազորությունների չարաշահմամբ՝ ելնելով անձնական կամ որևէ այլ շահագրգռվածությունից, միաժամանակ, թեև օրենսդիրն օգտագործել է «կոռուպցիոն գործողություն» եզրույթը, նշված վարքագիծը կարող է դրսևորվել նաև անգործությամբ: Նշվածից հետևում է նաև, որ կոռուպցիոն գործողության սուբյեկտիվ կազմի պարտադիր բաղադրիչ է մասնակիցներից առնվազն մեկի պաշտոնատար անձ լինելու հանգամանքը, հետևաբար գործողությունը կոռուպցիոն դիտվել չի կարող այն դեպքերում, երբ դրանում ուղղակիորեն ներգրավված են բացառապես մասնավոր անձինք:

Առաջին հարցը, որին անհրաժեշտ է անդրադառնալ այն է, թե ներառված է արդյո՞ք պետությունը այն սուբյեկտների շրջանակի մեջ, ովքեր կարող են վնաս կրել գործարքների կնքման կամ կատարման ընթացքում կոռուպցիոն գործողության արդյունքում իրավունքի խախտման հետևանքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերությունների մասնակիցները՝ ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա պետությունների քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիներ) ու

իրավաբանական անձինք են, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը և համայնքներն են (հոդված 128):

Քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կանոնները կիրառվում են օտարերկրյա իրավաբանական անձանց մասնակցությամբ հարաբերությունների նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետում նշված քաղաքացիական իրավունքի սուբյեկտների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում կիրառվում են իրավաբանական անձանց մասնակցությունը սահմանող նորմերը, եթե այլ բան չի բխում օրենքից կամ տվյալ սուբյեկտների առանձնահատկություններից:

Վերոշարադրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ պետությունը՝ որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտ, հանդես է գալիս իրավաբանական անձի կարգավիճակով և իր իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է այդ հարաբերությունների մյուս մասնակիցների հետ հավասար հիմունքներով: Այս կանոնից բացառություն կարող է լինել միայն օրենքով ուղղակիորեն սահմանված դեպքերում, կամ եթե դա օբյեկտիվորեն պայմանավորված է պետության՝ որպես իրավունքի սուբյեկտի առանձնահատկություններով, իսկ զուտ այն, որ պետությունը քաղաքացիական իրավակարգավորումների սահմանման և դրանց պաշտպանության մեխանիզմների, այդ թվում՝ դատական պաշտպանության կառուցակարգի ապահովման երաշխավորն է, չի կարող վերջինիս առանձնահատուկ դեր վերապահել նույն հարաբերությունների մյուս մասնակիցների համեմատ:

Մյուս կողմից անառարկելի է, որ պետությունը ևս կարող է վնաս կրել գործարքների կնքման կամ կատարման ընթացքում կոռուպցիոն գործողությունների արդյունքում իրավունքի խախտման հետևանքով, ուստի օրենքով այլ բան սահմանված

չլինելու և խախտված իրավունքի պաշտպանության մասով որևէ այլ առանձնահատկության բացակայության պայմաններում միանշանակ է, որ պետությունը ևս կարող է օգտվել իր խախտված իրավունքի պաշտպանության համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1^1-ին մասով սահմանված հայցային վաղեմության հատուկ՝ երկար ժամկետից:

Վերոշարադրյալը հիմք է տալիս եզրահանգելու, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1^1-ին մասով նախատեսված «անձ» եզրույթը տվյալ դեպքում վերաբերում է ինչպես ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներին և իրավաբանական անձանց, այնպես էլ պետությանը և համայնքներին:

Հաջորդիվ, անհրաժեշտ եմ համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1^1-ին մասի կիրառման նախապայմաններին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պահանջների որոշ տեսակների համար օրենքով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1^1-ին մասի բովանդակությունից հետևում է, որ այն կիրառելի է հետևյալ նախապայմանների առկայության դեպքում.

ա) անձի իրավունքի խախտումն առաջացրել է վնաս,

բ) խախտումը կապված է քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով գործարքի կնքման կամ կատարման ընթացքում կոռուպցիոն գործողության հետ և,

գ) վնաս առաջացրած գործողության կատարման պահից չի անցել 10 տարի:

Ընդհանուր առմամբ, քաղաքացիական իրավունքների խախտումը քաղաքացիական իրավունքի նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների դեմ ոտնձգող և անբարենպաստ հետևանքներ առաջացնող ոչ իրավաչափ գործողություն/անգործություն է: Նշվածից հետևում է, որ իրավունքի խախտումն ինքնին կարող է դրսևորվել ինչպես գործողության, այնպես էլ անգործության ձևով և իրավունքի խախտումը հաճախ համընկնում է անբարենպաստ հետևանքներ առաջացնող գործողության հետ, սակայն միշտ չէ, որ դրանք նույնանում են:

Նշված իրավանորմի բովանդակային վերլուծությունից բխում է, որ այն կիրառելի է վնասի հատուցման պահանջի մասին հայցերով միայն այն դեպքում, երբ անձի իրավունքի խախտումը կապված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված

կարգով գործարքի կնքման կամ կատարման ընթացքում կոռուպցիոն գործողության հետ:

Այս տեսանկյունից կանխատեսելի է, որ իրավունքի խախտման և կոռուպցիոն գործողության միջև կապը վերացական լինել չի կարող, այն պետք է լինի իրական և ուղղակի, այսինքն՝ իրավունքի խախտումը պետք է տեղի ունեցած լինի կոռուպցիոն գործողության արդյունքում, հակառակ պարագայում վնասը չի կարող դիտվել որպես կոռուպցիոն գործողության հետևանքով պատճառված, նույնիսկ եթե գործարքի կնքման կամ կատարման ընթացքում եղել են կոռուպցիոն դրսևորումներ, սակայն անձի իրավունքի խախտումը դրանց արդյունքում չէ, որ տեղի է ունեցել և դրանց ուղղակի հետևանքը չէ:

Նորմի կիրառության հարցում առանցքային նշանակություն ունի նաև վնասի առաջացման և կոռուպցիոն գործողությամբ պայմանավորված իրավունքի խախտման միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, քանի որ եթե գործարքի կնքման կամ կատարման ընթացքում կատարվել է կոռուպցիոն գործողություն, սակայն իրավունքի խախտումն ու վնասի առաջացումն այդ գործողության հետևանք չեն, ապա վերը նշված նորմը կիրառման ենթակա չէ, այսինքն՝ այն կիրառելի է ոչ թե ցանկացած դեպքում, երբ գործարքների կնքման կամ կատարման ընթացքում կատարվել է կոռուպցիոն գործողություն, այլ միայն՝ եթե իրավունքը խախտվել է հատկապես կոռուպցիոն գործողության հետևանքով:

Հարկ եմ համարում նշել, որ վնասը բոլոր դեպքերում հաջորդում է կոնկրետ ոչ իրավաչափ գործողությանը/անգործությանը, սակայն կարող է ի հայտ գալ ինչպես դրանց կատարումից անմիջապես հետո, այնպես էլ՝ որոշ ժամանակ անց, հետևաբար էականը ոչ թե գործողության և վնասի առաջացման միջև առկա ժամանակագրական խզումն է, այլ այն, թե հատկապես ո՞ր գործողությունն է ուղղակիորեն հանգեցրել տվյալ անբարենպաստ հետևանքին:

Հատկանշական է նաև, որ վնասի առաջացմանը կարող են նախորդել մի շարք հաջորդական գործողություններ, որոնք անուղղակիորեն նպաստել են վնասի առաջացմանը, սակայն ինքնին դրա առաջացման ուղղակի պատճառ չեն հանդիսացել, ուստի առանձնակի կարևորություն ունի վնասի և կոռուպցիոն գործողության միջև պատճառահետևանքային կապի բնույթի բացահայտումը: Այսինքն՝ ամեն դեպքում պետք է առկա լինի կոռուպցիոն գործողության և պատճառված վնասի միջև ուղղակի պատճառահետևանքային կապը, հետևաբար անհրաժեշտ է ապացուցել, որ վնասը չէր առաջանա, եթե անձի իրավունքը չխախտվեր գործարքի կնքման կամ կատարման ընթացքում կոռուպցիոն գործողության արդյունքում:

Իմ գնահատմամբ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1^1-ին մասի կիրառման համար դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է պարզի անձի իրավունքի խախտման և դրա հետևանքով վնասի առաջացման փաստը, ինչպես նաև

այն, թե արդյո՞ք իրավունքի խախտումը կապված է գործարքների կնքման կամ կատարման ընթացքում կոռուպցիոն գործողության հետ՝ հստակ որոշակիացնելով այն գործողությունը, որն առաջացրել է վնաս, քանի որ օրենսդիրը հենց այդ գործողության կատարման պահն է դիտել որպես հայցային վաղեմության ժամկետի սկիզբ:

Եվ վերջապես, օրենսդիրը սահմանել է, որ հայցային վաղեմության ժամկետն սկսվում է այն գործողության կատարման պահից, որն առաջացրել է վնաս, հետևաբար էական է, որպեսզի այդ գործողությունը, եթե այն կոռուպցիոն չէ, ուղղակի կապի մեջ լինի կոռուպցիոն գործողության հետ, հակառակ դեպքում, նույնիսկ գործարքի կնքման կամ կատարման ընթացքում կոռուպցիոն գործողության առկայությունը, եթե այն ուղղակիորեն չի հանգեցրել իրավունքի խախտման արդյունքում վնասի առաջացմանը, ինքնաբերաբար չի կարող հիմք լինել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1[1]-ին մասի կիրառման համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ վնասը քաղաքացիական շրջանառության մասնակցի՝ օրենքով պահպանվող իրավունքների խախտման դեպքում վրա հասնող անբարենպաստ, բացասական հետևանքն է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածից հետևում է, որ վնասը կարող է արտահայտվել չնախատեսված լրացուցիչ ծախսեր կատարելով կամ այդպիսի ծախսերի կատարման անհրաժեշտությամբ, գույքի կորստով կամ վնասվածքով, եկամուտների չստացմամբ (բաց թողնված օգուտ): Հակաիրավական, ոչ օրինաչափ վարքագիծն այն գործողությունը կամ անգործությունն է, որը խախտում է օրենքի, այլ իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև անձի սուբյեկտիվ իրավունքը: Գործողությունն անձի նպատակաուղղված, կամային արարքն է, իսկ անգործությունն արտահայտվում է անհրաժեշտ և պարտադիր վարքագիծ դրսևորելուց ձեռնպահ մնալով: Ոչ օրինաչափ վարքագծի և վնասի միջև պատճառահետևանքային կապը ենթադրում է, որ վնասը պետք է հանդիսանա ոչ օրինաչափ վարքագծի ուղղակի, անմիջական հետևանք: Այն դեպքում, երբ վնասն անհրաժեշտաբար թելադրված չէ ոչ օրինաչափ գործողությամբ (անգործությամբ), կամ գործողության (անգործության) և վնասի միջև կապն անուղղակի է, վնասի հատուցման համար անհրաժեշտ պատճառահետևանքային կապի պայմանն առկա չէ: Վնաս պատճառող անձի մեղքը նրա սուբյեկտիվ վերաբերմունքն է իր ոչ օրինաչափ գործողության (անգործության) և առաջացած հետևանքի՝ վնասի նկատմամբ, ինչը կարող է դրսևորվել թե՛ դիտավորության, և թե՛ անզգուշության ձևով *(տե՛ս ի թիվս այլնի, Նելլի Մկրտչյանն ընդդեմ «Երևան հյուրանոց» բաց բաժնետիրական ընկերության թիվ ԵԿԴ/2600/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը)*:

Մեկ այլ գործով կայացրած որոշմամբ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ դելիկտային պարտավորությունների առաջացման համար պետք է վնասի և հակաիրավական արարքի միջև պատճառական կապը լինի ուղղակի և հաստատված, հակառակ դեպքում անուղղակի պատճառական կապը չի կարող

պատասխանատվության պայման դառնալ *(տե՛ս Ալբերտ Ղազարյանը և Արտավազդ Ստեփանյանն ընդդեմ «ԵԱՀ Երևանի ամրանների գործարան» ԲԲԸ-ի թիվ ԵԿԴ/5007/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.03.2022 թվականի որոշումը)*:

Պետք է արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1[1]-ին մասի առանձնահատկությունը պայմանավորված է իրավունքի խախտմանը հանգեցրած գործողության կոռուպցիոն բնույթով, հետևաբար, սույն որոշման վերը արտահայտած դիրքորոշման հաշվառմամբ, այդ նորմը կիրառելի է, եթե առկա է ուղղակի և հաստատված պատճառահետևանքային կապ քաղաքացիաիրավական գործարքի կնքման կամ կատարման ընթացքում կոռուպցիոն գործողության և անձի իրավունքի խախտման ու վնասի առաջացման միջև:

Հարկ եմ համարում հավելել նաև, որ գործարքի կնքումը և կատարումը շարունակական գործողություններ լինելով հանդերձ՝ նույնական գործողություններ չեն և դրանց տարանջատումը հնարավոր է՝ հաշվի առնելով դրանց միջև առկա պատճառահետևանքային կապը: Ասվածից հետևում է, որ եթե նույնիսկ գործարքի կնքման ընթացքում տեղ է գտել կոռուպցիոն գործողություն, ապա դա ինքնաբերաբար չի նշանակում, որ դրան ժամանակագրական առումով հաջորդող բոլոր, այդ թվում նաև՝ վնաս պատճառած գործողությունները ևս կրում են կոռուպցիոն բնույթ: Պատճառված վնասը կոռուպցիոն գործողության հետևանք համարելու նախապայման է հանդիսանում գործողության՝ կոռուպցիոն բնույթի լինելը: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել նաև, որ պարտադիր չէ, որ կատարված գործողությանն անմիջապես հաջորդի դրա արդյունքում առաջացող վնասը, այսինքն՝ կոռուպցիոն գործողության և դրա հետևանքով առաջացած վնասի միջև կարող է լինել ժամանակային տարբերություն, ուստիև՝ վնասը կարող է առաջանալ ոչ թե կոռուպցիոն գործողության կատարման պահին, այլ՝ ավելի ուշ:

Սույն գործով Դատախազությունը հայց է ներկայացրել ընդդեմ Հայկ Յուրիի Ճշմարիտյանի՝ պետությանը պատճառված վնասը փոխհատուցելու պահանջով, այն հիմնավորմամբ, որ նախաքննությամբ պարզվել և հիմնավորվել է, որ Հայկ Յուրիի Ճշմարիտյանը 2002 թվականից մինչև 2005 թվականի հուլիսի 20-ը, հանդիսանալով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ և համակարգելով կապի ոլորտը, պետական սեփականություն հանդիսացող առանձնապես խոշոր չափերի գույքին խաբեությամբ տիրանալու և այդ գույքի վերավաճառքից գերշահույթ ստանալու նպատակով հանձնարարել է իր անմիջական վերահսկողության ներքո գտնվող «Նամականիշ» ՓԲ ընկերության տնօրեն Վաղարշակ Ռաֆիկի Ալեքսանյանին 2005 թվականի հունվարի 10-ին արտոնյալ պայմաններով նամականիշերի, գեղաթերթիկների և մանրաթերթիկների առաքման պայմանագիր կնքել դեռևս 2002 թվականի նոյեմբերի 22-ին Կիպրոսում իր կողմից հիմնած և կանոնադրական կապիտալի առավելագույն մասով իրեն պատկանող «Էլինետ Էնթերպրայսիս» ՍՊ

ընկերության հետ, համաձայն որի՝ գնորդն ի դեմս «Էլինետ Էնթերպրայսիս» ՍՊ ընկերության, պարտավոր է եղել ընդունել առաքված ապրանքը և վճարել դրա դիմաց: Հայկ Յուրիի Ճշմարիտյանը, ի սկզբանե նպատակ հետապնդելով խարդախությամբ կատարել ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերի հափշտակություն, 2005 թվականի հունիսի 27-ից մինչև 2007 թվականի սեպտեմբերի 28-ը ընկած ժամանակահատվածում ստանալով 894.748.082,79 ՀՀ դրամին համարժեք՝ 2.098.349,09 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով նամականիշներ, գեղաթերթիկներ և մանրաթերթիկներ, հանձնարարել է փաստացի առաքված ապրանքի դիմաց «Նամականիշ» ՓԲ ընկերությանը մաս-մաս վճարել ընդամենը 875.201,15 ԱՄՆ դոլարին համարժեք 415.078.386.79 ՀՀ դրամ գումարը, իսկ «Նամականիշ» ՓԲ ընկերությանը պատկանող և փաստացի պետական սեփականություն հանդիսացող 479.669.696 ՀՀ դրամին համարժեք 1.223.147,94 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով գույքի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարման մասով, նախաձեռնել է արհեստական ձգձգումներ՝ պատրանք ստեղծելով գույքային և դրանց հետ կապված ոչ գույքային իրավահարաբերությունների ոչ պատշաճ կատարման հանգամանքների վերաբերյալ:

Դատարանը, փաստելով, որ պետությանը պատճառված վնասի չափը ձևավորվել է գործարքի կնքման և կատարման ընթացքում դրսևորած հակաիրավական վարքագծի հետևանքով, որն իրականացվել է 2005-ից 2007 թվականների ընթացքում, և ենթադրյալ խախտումը կապված է գործարքի կնքման և կատարման ընթացքում կոռուպցիոն գործողության հետ, որը դրսևորվել է Հայկ Յուրիի Ճշմարիտյանի կողմից ենթադրյալ անհիմն օգուտ ստանալու տեսքով, գտել է, որ կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1^1-ին մասը:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ գործարքի կնքմամբ պետությանը վնաս չի պատճառվել, այն առաջացել է պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ չկատարելու արդյունքում, մասնավորապես նշել է. «(...)ըստ հայցի փաստական հիմքերի՝ պատասխանողի հակաիրավական գործողությունները սկսվել են մատակարարման պայմանագրի կնքմամբ, այնուհետև պատասխանողի ոչ իրավաչափ վարքագիծը դրսևորվել է պայմանագրի կատարման ընթացքում՝ վճարման պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու ուղղությամբ իրականացված վերը թվարկված գործողությունների համակցության տեսքով:

Այսինքն՝ հակաիրավական վարքագիծը սույն դեպքում կրել է շարունակվող բնույթ, այն է՝ ոչ իրավաչափ վարքագիծը դրսևորվել է առանձին արարքների կատարմամբ՝ սկսվել է գործարքի կնքմամբ և ավարտվել պայմանագրի կատարման փուլում՝ հետապնդելով մեկ միասնական նպատակ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Նամականիշ» ՓԲԸ-ի և «Էլինետ Էնթերպրայսիս» ՍՊԸ-ի միջև 10.01.2005 թվականին կնքված պայմանագրի հիման

վրա ապրանքների մատակարարումը կատարվել է 2005 թվականի հունիսի 27-ից մինչև 2007 թվականի սեպտեմբերի 28-ը:

Վերոնշյալի հիման վրա՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վնասի հանգեցրած ոչ իրավաչափ գործողությունները կատարվել են նորմի ուժի մեջ մտնելուց հետո: Այս առումով հարկ է նաև նշել, որ վկայակոչված վնասը ծագել է ոչ թե մատակարարման պայմանագրի կնքման պահին, այլ՝ պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ չկատարելու, մատակարարի կողմից գումարը ինչպես այլ արտադատական, այնպես էլ դատական եղանակով ստանալու հնարավորությունը սպառելուն ուղղված հայցադիմումով նշված ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում:

Վնասը չէր կարող ծագել, քանի դեռ ապրանքները չէին մատակարարվել և չէր ծագել դրանց դիմաց վճարելու պարտավորությունը: Այսինքն՝ պետության գույքային իրավունքների խախտման իրավաբանական փաստը՝ պատճառված վնասը, սույն դեպքում վրա է հասել ոչ թե պայմանագրի կնքմամբ, այլ մատակարարված ապրանքների դիմաց վճարումները ստանալու անհնարինությամբ:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված հայցապահանջով բռնագանձման ենթակա ենթադրաբար պատճառված վնասը ծագել է պայմանագրի կատարման ընթացքում»:

Փաստորեն, Դատարանը և Վերաքննիչ դատարանը պատասխանողին վերագրվող ենթադրյալ ոչ իրավաչափ գործողությունները դիտել են որպես միասնական վարքագծի բաղադրիչներ, չեն տարանջատել դրանք, չեն բացահայտել այդ գործողություններից յուրաքանչյուրի բնույթը, դրա/դրանց և իրավունքի խախտման/վնասի առաջացման միջև պատճառահետևանքային կապը, մինչդեռ, նրանք պետք է պարզեին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1^1-ին մասի կիրառման համար անհրաժեշտ պայմանների առկայությունը, մասնավորապես, թե ո՞րն է եղել ենթադրյալ կոռուպցիոն գործողությունը, արդյո՞ք այդ գործողությունն է հանգեցրել պետության իրավունքի խախտման և արդյո՞ք վնասն առաջացել է հենց այդ խախտման հետևանքով:

Միայն այդ հանգամանքները պարզելու դեպքում կարելի էր եզրահանգման գալ քննարկման առարկա նորմի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի կանոններով սույն գործով կիրառելի լինելու մասին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատասխանողին վերագրվող, ենթադրյալ ոչ իրավաչափ գործողությունները կատարվել են ինչպես մինչև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1^1-ին մասի ուժի մեջ մտնելը, այնպես էլ՝ դրա ուժի մեջ մտնելուց հետո:

Այսպիսով, գտնում եմ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1^1-ին մասով սահմանված հայցային վաղեմության ժամկետը կիրառելի է նաև այն գործերով, որոնցով որպես հայցվոր հանդես է գալիս պետությունը: Միաժամանակ, սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1^1-ին մաս կիրառելի

լինելու հարցը կարող է պարզվել միայն գործի նոր քննության ընթացքում հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը կրկին քննարկելու արդյունքում, ուստի գտնում եմ, որ վճռաբեկ բողոքն այնուամենայնիվ ենթակա էր բավարարման, սակայն ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 03.05.2024 թվականի որոշումը պետք է բեկանվեր և գործն ուղարկվեր ՀՀ հակակոռուպցիոն դատարան նոր քննության ոչ թե Վճռաբեկ դատարանի որոշման, այլ սույն հատուկ կարծիքի հիմնավորումներով և պատճառաբանություններով:

ԴԱՏԱՎՈՐ ԱՐՄԱՆ ԿՈՒՐԵԽՅԱՆ